«Հայաստանի Էլեկտրական Ցանցեր»

ՓԲԸ

2010 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵՐԵՎԱՆ 2011

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է հաշվի առնելով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 30-ի N324Ա որոշմամբ համաձայնեցված ներդրումային ծրագրի շրջանակներում 2010 թվականին իրականացված փաստացի ներդրումների վերաբերյալ ընկերության 2011 թվականի հունիսի 2-ի №04-ԵԲ.05/2876 գրությամբ ներկայացված հաշվետվությունը:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2010 թվականի ներդրումային ծրագիրը

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2010 թվականի տարեկան ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսված էր տարբեր միջոցառումներ իրականացնել բաշխիչ ցանցերի վերակառուցման և վերազինման ուղղությամբ՝ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների, ինչպես նաև հուսալիության և անվտանգության աստիճանի բարձրացման նպատակով: Նախատեսված էր ներդրումներ իրականացնել նաև բաշխիչ ցանցերի ընդլայնման, բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման և ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով, համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի, արտադրական և տնտեսական գործիքների ձեռքբերման ուղղություններով: Բացի վերը նշվածը, ներդրումներ էին նախատեսվում «Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր» վարկային ծրագրի շրջանակներում 110կվ ենթակայանների արդիականացման ուղղությամբ:

Ներդրումային ծրագրով նախատեսված էր 2010 թվականի ընթացքում իրականացնել 33 524,1[1] մլն դրամի ներդրումներ:

[1] Սույն վերլուծական տեղեկանքում ներկայացված բոլոր գումարները չեն ներառում ավելացված արժեքի հարկը:

Գրաֆիկ 1-ում ներկայացված է ընկերության 2010 թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը հիմնական ուղղությունների միջև՝ ըստ դրանց նպատակային առանձնահատկությունների:

Գրաֆիկ 1



Ինչպես երևում է գրաֆիկ 1-ից, ներդրումների հիմնական մասը՝ շուրջ 53,0 %-ը, նախատեսված էր ուղղել 110 կՎ լարման 17 ենթակայանների արդիականացմանը: Այս ներդրումներն իրականացվում են «Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր» վարկային ծրագրի շրջանակներում՝ Ճապոնիայի Զարգացման և Համագործակցության բանկի վարկի միջոցներով: Միաժամանակ, նշված ծրագրով նախատեսված ներդրումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ընկերությունը նախատեսում էր իր միջոցներով այդ ենթակայաններում իրականացնել որոշ լրացուցիչ աշխատանքներ, որոնք նույնպես ներառվել են ներդրումային ծրագրում:

Ներդրումների մյուս խոշոր ուղղությունը՝ շուրջ 24%, սպասարկման որակի ցուցանիշների բարելավման նպատակով նախատեսվում էր ուղղել մալուխային և

օդային գծերի ու ենթակայանների վերակառուցմանը, վերազինմանը և նորերի կառուցմանը:

Անվտանգության տեխնիկայի ապահովման և մաշված սարքավորումների փոխարինման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 2820.0 մլն դրամ՝ ընդհանուրի 8.4%-ը:

Հաշվառման համակարգի բարելավմանն ուղղված ներդրումները իրենց տեսակարար կշռով չորրորդն են՝ ընդհանուրի 6,9%-ը: Այդ նպատակով պետք է փոխարինվեին կամ տեղակայվեին նոր հաշվիչներ և հաշվիչների արկղեր՝ էլեկտրաէներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով դրանց ներկայացվող պահանջների ապահովման նպատակով: Նախատեսվում էին նաև 35 կՎ լարման ցանցերում հաշվառման համակարգի ավտոմատացման աշխատանքներ:

1600,0 մլն դրամ՝ ընդհանուրի 4,8%-ը նախատեսվում էր ներդնել նոր սպառողների սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացնելու ուղղությամբ:

Ներդրումային ծրագրի մյուս ուղղություններով նախատեսված ներդրումները, որոնք կազմում են ընդհանուրի 2,9%-ը, պետք է իրականացվեին մեքենա-մեխանիզմների, գրասենյակային գույքի, համակարգչային տեխնիկայի, ինչպես նաև շահագործման կազմակերպման համար այլ սարքավորումների և գործիքների ձեռքբերման ուղղությամբ: Այս ուղղությամբ 2010 թվականի ընթացքում նախատեսվում էր իրականացնել 965,0 մլն դրամի ներդրումներ:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2010 թվականի ներդրումային գործունեության արդյունքները

Համաձայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի փաստացի իրականացված ներդրումների մասին հաշվետվության, ընկերությունը 2010 թվականի ընթացքում կատարել է 46 222,5 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում շահագործման են հանձնվել 38 692,31 մլն դրամի հիմնական միջոցներ: Մնացած 7530.19 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ: Նշենք, որ այս ծավալում 17 064,43 մլն դրամի անավարտ աշխատանքները վերաբերում են

ճապոնական վարկի շրջանակներում 110 կՎ ենթակայանների վերակառուցման ուղղությամբ իրականացված ներդրումներին:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից փաստացի իրականացված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

մլն. դրամ առանց ԱԱՀ

N	**Ներդրումների նպատակային ուղղությունները**	Հանձնաժողովի հետ համաձայնեցված 2010 թվականի կանխատեսվող ծավալը		2010 թվականի ընթացքում փաստացի կատարված ներդրումների ծավալը		Ներդրու-մային ծրագրի կատարման ցուցանիշը
		մլն դրամ	%	մլն դրամ	%	%
1	Սպասարկման որակի ցուցանիշների բարելավում	8 042,3	24,0%	9 188,7	23,7%	114,3%
2	Նոր սպառողների միացում	1 600,0	4,8%	4 152,4	10,7%	259,5%
3	110 կՎ ենթակայանների արդիականացում	17 770,8	53,0%	18 441,0	47,7%	103,8%
4	Հաշվառման համակարգի բարելավում	2 325,9	6,9%	926,6	2,4%	39,8%
5	Անվտանգության միջոցառումներ և մաշված սարքավորումների փոխարինում	2 820,0	8,4%	2 505,6	6,5%	88,9%
6	Գրասենյակային գույքի ձեռքբերում	75,0	0,2%	163,0	0,4%	217,3%
7	Մեքենաների և մեխանիզմների ձեռքբերում	795,0	2,4%	826,9	2,1%	104,0%
8	Համակարգչային տեխնիկայի և ծրագրերի ձեռքբերում	75,0	0,2%	88,1	0,2%	117,4%
9	Այլ	20,0	0,1%	20,2	0,1%	101,2%
10	Ներդրումային ծրագրի շրջանակներից դուրս իրականացված ներդրումներ		0,0%	2 379,9	6,2%	
	Ընդամենը	**33 524,1**	**100%**	**38 692,3**	**100%**	**115%**

Ստորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված են իրականացված ներդրումների՝ (ներառյալ անավարտ աշխատանքները) ձևավորման աղբյուրները.

Աղյուսակ 2

	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Իրականացված ներդրումների ծավալները
1	2	3
1	Նախորդ ժամանակահատվածում իրականացված ներդրումներից	2 820,14
2	Կողմնակի կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներից	19 126,15
3	Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներից	1 617,13
4	Սեփական ուժերով կատարված աշխատանքներից	22 659,11
4.1	*աշխատավարձ և սոցիալական ապահովության ծախսեր*	*251,93*
4.2	*հումք և նյութեր*	*2 440,06*
4.3	*տեղակայման ենթակա սարքավորումներ*	*6 809,02*
4.4	*այլ*	*13 158,09*
5	ԸՆԴԱՄԵՆԸ	46 222,52

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ից, ընկերությունը 2010 թվականին ներդրումների իրականացման նպատակով ներգրավել է 46 222.5 մլն դրամ, որից 2820,14 մլն դրամը նախորդ ժամանակաշրջանում իրականացված ներդրումներն են: Ներդրումների 41,4%-ը, իրականացվել է այլ կազմակերպությունների միջոցով: Սեփական ուժերով կատարված ներդրումների ծավալը կազմել է ընդհանուրի մոտ 49%-ը: Ներդրումների 3,5%-ը բաժին է ընկնում տեղակայում չպահանջող սարքավորումների ձեռքբերմանը, իսկ մնացած 6,1%-ը նախորդ ժամանակաշրջանում իրականացված, սակայն 2010 թվականին շահագործման հանձնված աշխատանքներին:

Ստորև, առավել հանգամանալից ըստ ուղղությունների, ներկայացված են ընկերության կողմից 2010 թվականին իրականացված ներդրումների ծավալները՝

հետագայում դրանք սակագնով ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցման տեսանկյունից:

Սպասարկման որակի բարելավմանն ուղղված ներդրումներ

Սպասարկման որակի բարելավման նպատակով ընկերության 2010 թվականի ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում էր իրականացնել 8042.3 մլն դրամի ներդրումներ՝ բաշխիչ ցանցերի լարման տարբեր մակարդակներում օդային և մալուխային գծերի, ենթակայանների վերանորոգման, վերակառուցման և նորերի կառուցման նպատակով: Փաստացի իրականացվել է 10455.4 մլն դրամի ներդրումներ, որից շահագործման են հանձնվել 9188.7 մլն դրամի ներդրումները (8431.0 մլն դրամը հոսանքազրկումների միջին հաճախության և տևողության, իսկ 757.6 մլն դրամը լարման շեղումների միջին հաճախության և տևողության կրճատման ուղղությամբ):

Ստորև ներկայացվում է 2010 թվականի ընթացքում սպառողների հոսանքազրկումների միջին հաճախության և տևողության ցուցանիշների համեմատությունը 2009 թվականի փաստացի և 2010 թվականի ծրագրային ցուցանիշների հետ:

Աղյուսակ 3

Հոսանքազրկումների միջին հաճախություն						
Սպասարկման տարածքը	Չափի միավոր	2009թ. փաստացի	2010թ. ծրագրային	2010թ. փաստացի	2010թ.փաստ. 2009թ.փաստ. նկատմամբ	2010թ.փաստ. 2010թ.ծրագր. նկատմամբ
Երևան	հոսանքա-զրկում/սպառող	5,94	5,84	5,74	3%	2%
Արարատ	հոսանքա-զրկում/սպառող	4,43	4,42	7,37	-66%	-67%
Վայոց Ձոր	հոսանքա-զրկում/սպառող	4,33	4,30	9,91	-129%	-130%
Արագածոտն	հոսանքա-զրկում/սպառող	7,31	7,05	5,64	23%	20%
Արմավիր	հոսանքա-զրկում/սպառող	7,97	7,45	10,33	-30%	-39%
Կոտայք	հոսանքա-զրկում/սպառող	5,22	5,16	6,53	-25%	-27%
Գեղարքունիք	հոսանքա-զրկում/սպառող	5,48	5,36	7,60	-39%	-42%
Տավուշ	հոսանքա-զրկում/սպառող	8,03	7,87	7,55	6%	4%
Շիրակ	հոսանքա-զրկում/սպառող	4,97	4,84	5,03	-1%	-4%
Սյունիք	հոսանքա-զրկում/սպառող	1,58	1,55	3,04	-92%	-96%
Լոռի	հոսանքա-զրկում/սպառող	5,01	4,62	5,43	-8%	-18%

Հոսանքազրկումների միջին տևողություն						
Երևան	րոպե/ սպառող	531,60	528,00	588,38	-11%	-11%
Արարատ	րոպե/ սպառող	742,48	734,70	1275,81	-72%	-74%
Վայոց Ձոր	րոպե/ սպառող	895,17	895,00	1880,75	-110%	-110%
Արագածոտն	րոպե/ սպառող	1011,74	949,50	980,85	3%	-3%
Արմավիր	րոպե/ սպառող	1193,75	1075,20	1523,95	-28%	-42%
Կոտայք	րոպե/ սպառող	897,40	892,00	1088,37	-21%	-22%
Գեղարքունիք	րոպե/ սպառող	1070,23	1052,00	1535,79	-44%	-46%
Տավուշ	րոպե/ սպառող	1175,48	1151,97	1145,76	3%	1%
Շիրակ	րոպե/ սպառող	610,13	597,00	727,93	-19%	-22%
Սյունիք	րոպե/ սպառող	454,00	432,00	1178,48	-160%	-173%
Լոռի	րոպե/ սպառող	769,97	717,20	947,93	-23%	-32%

Ստորև ներկայացվում է 2010 թվականի ընթացքում սպառողների լարման շեղման միջին հաճախության և տևողության ցուցանիշների համեմատությունը 2009 թվականի փաստացի և 2010 թվականի ծրագրային ցուցանիշների հետ:

Աղյուսակ 4

Էլեկտրական էներգիայի լարման շեղման միջին հաճախություն						
Սպասարկման տարածքը	Չափի միավոր	2009թ. փաստացի	2010թ. ծրագրային	2010թ. փաստացի	2010թ.փաստ. 2009թ.փաստ. նկատմամբ	2010թ.փաստ. 2010թ.ծրագր. նկատմամբ
Երևան	լարման շեղում/բաժանորդ	10.20	8,57	10,76	-5%	-26%
Արարատ	լարման շեղում/բաժանորդ	26.26	21,85	20,37	22%	7%
Վայոց Ձոր	լարման շեղում/բաժանորդ	15.16	12,07	4,33	71%	64%
Արագածոտն	լարման շեղում/բաժանորդ	27.24	22,64	15,62	43%	31%
Արմավիր	լարման շեղում/բաժանորդ	19.72	15,89	16,82	15%	-6%
Կոտայք	լարման շեղում/բաժանորդ	11.12	10,24	9,83	12%	4%
Գեղարքունիք	լարման շեղում/բաժանորդ	19.02	16,54	18,87	1%	-14%
Տավուշ	լարման շեղում/բաժանորդ	23.95	19,32	8,31	65%	57%
Շիրակ	լարման շեղում/բաժանորդ	17.53	15,79	7,25	59%	54%
Սյունիք	լարման շեղում/բաժանորդ	8.54	7,21	16,35	-91%	-127%
Լոռի	լարման շեղում/բաժանորդ	18.00	17,82	12,65	30%	29%
Էլեկտրական էներգիայի լարման շեղման միջին տևողություն						

Երևան	ժամ/բաժանորդ	1 789.59	1700,00	1936,35	-8%	-14%
Արարատ	ժամ/բաժանորդ	4 641.10	4600,00	3741,35	19%	19%
Վայոց Ձոր	ժամ/բաժանորդ	2 765.03	2700,00	777,53	72%	71%
Արագածոտն	ժամ/բաժանորդ	4 868.83	4800,00	2822,13	42%	41%
Արմավիր	ժամ/բաժանորդ	3 519.15	3000,00	3101,44	12%	-3%
Կոտայք	ժամ/բաժանորդ	1 907.93	1850,00	1749,61	8%	5%
Գեղարքունիք	ժամ/բաժանորդ	3 481.83	3400,00	3424,24	2%	-1%
Տավուշ	ժամ/բաժանորդ	4 187.37	4100,00	1459,79	65%	64%
Շիրակ	ժամ/բաժանորդ	3 163.43	3120,00	1309,83	59%	58%
Սյունիք	ժամ/բաժանորդ	1 532.10	1500,00	2930,59	-91%	-95%
Լոռի	ժամ/բաժանորդ	3 182.98	3100,00	2283,13	28%	26%

Ինչպես երևում է աղյուսակներից, Հանրապետության 10 մարզերից 8-ում հոսանքազրկումների միջին հաճախության և տևողության ցուցանիշները ոչ միայն չեն հասել ծրագրայինին, այլ վատթարացել են նախորդ տարվա համեմատությամբ: Մասնավորապես Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում նշված ցուցանիշները վատթարացել են մոտ 2 անգամ: Ինչպես և նախորդ տարիների ընթացքում, ընկերության գրանցած փաստացի տվյալները ցույց են տալիս, որ սպասարկման որակի ցուցանիշները փոփոխվում են իրականացված ներդրումներից անկախ: Մեր կարծիքով դա պայմանավորված է նաև ներկայացվող տեղեկատվության ոչ հավաստի լինելու հանգամանքով, որի վերաբերյալ ընկերությունը բազմիցս զգուշացվել է: Ուստի կարծում ենք, որ ընկերությունը բավարար ջանքեր չի գործադրում անջատումների քանակի և տևողության գրանցումների մակարդակը բարելավելու ուղղությամբ: Ներկայացված տեղեկատվության լիարժեք հավաստի լինելու հանգամանքի վերաբերյալ կասկածի տեղիք է տալիս նաև ստորև ներկայացված ՀՀ մարզերում 2010 թվականի ընթացքում հոսանքազրկումներ չունեցած բնակավայրերի թիվը:

Աղյուսակ 5

		Բնակավայրերի քանակ	Բնակավայրերի քանակ առանց ընդհատումների	%

1	Արագածոտնի մարզ	119	63	53%
2	Արարատի մարզ	98	4	4%
3	Արմավիրի մարզ	98	40	41%
4	Գեղարքունիքի մարզ	97	10	10%
5	Լոռու մարզ	124	20	16%
6	Կոտայքի մարզ	69	14	20%
7	Շիրակի մարզ	130	6	5%
8	Սյունիքի մարզ	134	35	26%
9	Վայոց ձորի մարզ	54	10	19%
10	Տավուշի մարզ	65	3	5%
11	Ընդամենը	989	205	21%

Ինչպես երևում է աղյուսակից, ՀՀ մարզերի 989 բնակավայրերից 205-ում 2010 թվականի ընթացքում ընդհանրապես հոսանքազրկում չի գրանցվել: Նշվածը ևս թույլ է տալիս եզրակացնել, որ ոչ բոլոր հոսանքազրկումներն են ներառվում հաշվետվություններում:

Նոր սպառողների միացում

Նոր սպառողների սպառման համակարգերը էլեկտրամատակարարման ցանցին միացման ուղղությամբ 2010 թվականին նախատեսվում էր ներդնել 1600 մլն դրամ: Փաստացի ներդրվել է 5190.2 մլն դրամ և շահագործման են հանձնվել 4152.4 մլն դրամի հիմնական միջոցներ: Ներդրումային ծրագրի այս ուղղության գերազանցումը պայմանավորված է նոր սպառողների սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացման դիմումներով և չէր կարող կանխատեսվել ներդրումային ծրագրի համաձայնեցման ժամանակ: Հարկ ենք համարում նշել, որ նոր բաժանորդների միացման նպատակով գանձվել են 763.6 մլն դրամի միացման վճարներ, որոնք ենթակա են նվազեցման ներդրումների ծավալից:

Հատուկ ծրագրերի իրականացում

«Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր» վարկային ծրագրի շրջանակներում, Ճապոնիայի Զարգացման և Համագործակցության բանկի վարկի միջոցներով 110 կՎ լարման 17 ենթակայանների արդիականացման աշխատանքների և դրանց իրականացման համար ընկերության միջոցներով իրականացվող անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների ուղղությամբ ներդրվել է 23286.3 մլն դրամ, որից 2010 թվականին շահագործման են հանձնվել ընդամենը 18440.98 մլն դրամի աշխատանքները: Այս ուղղությունում «Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր» վարկային ծրագրի իրականացման նախապատրաստական աշխատանքների ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 1 700 մլն դրամ, սակայն փաստացի ներդրվել է 4 459.65 մլն դրամ (ներդրումային ծրագրով համաձայնեցված ծավալը կազմել է: 2 759.65 մլն դրամ):

Հաշվառման համակարգի վերազինման ուղղությամբ կատարված ներդրումներ

Ներդրումային ծրագրի հաջորդ՝ հաշվառման համակարգի վերազինման ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել 2325.9 մլն դրամի ներդրումներ: Այդ նպատակով պետք է փոխարինվեին հետագա շահագործման համար ոչ պիտանի հաշվիչները, կատարելագործվեր առևտրային հաշվառման համակարգը և տեղակայվեին հաշվիչների նոր արկղեր՝ հաշվառման սարքերի մեխանիկական վնասվածքները և կողմնակի անձանց միջամտությունը դրանց միացման սխեմային կամ աշխատանքին բացառելու, ինչպես նաև սպառողների և ընկերության ներկայացուցիչների համար հաշվիչի ցուցմունքի տեսանելիությունը՝ դրանց շահագործման և պահպանման անվտանգությունն ապահովելու նպատակով:

Համաձայն ներկայացված հաշվետվության, այս ուղղությամբ ընկերությունն իրականացրել է 926.6 մլն դրամի ներդրումներ, այդ թվում՝

- հաշվիչների փոխարինման նպատակով՝ 504.7 մլն դրամ, որից 336.87 մլն դրամը սպառողների համար միաֆազ էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչների տեղադրման նպատակով,
- հաշվիչների արկղերի տեղադրման նպատակով՝ 291.5 մլն դրամ,
- 35 կՎ լարման ցանցերում էլեկտրական էներգիայի ավտոմատ հաշվառման համակարգի համալրման նպատակով՝ 143.3 մլն դրամ, որից ավարտվել են 130.3 մլն դրամի աշխատանքները: Ընդ որում այս ուղղությամբ հանձնաժողովի հետ համաձայնացվել էր ընդամենը 30 մլն դրամի ներդրումներ:

Անվտանգության տեխնիկայի ապահովման և մաշված սարքավորումների փոխարինման ուղղությամբ կատարված ներդրումներ

Ներդրումային ծրագրի մյուս ուղղությունը անվտանգության տեխնիկայի ապահովման և մաշված սարքավորումների փոխարինման ուղղությունն է: Այս ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 2820.0 մլն դրամ: Փաստացի ներդրվել է 2586.5 մլն դրամ, որի արդյունքում 2505.6 մլն դրամի հիմնական միջոցներ հանձնվել են շահագործման: Արդյունքում լարման տարբեր մակարդակներում փոխարինվել են ուժային տրանսֆորմատորներ և շահագործման համար ոչ պիտանի այլ սարքավորումներ, վերակառուցվել են օդային գծեր: Այս բաժնում տարբեր սարքավորումների փոխարինման ուղղությամբ հանձնաժողովի հետ համաձայնեցված ծավալը գերազանցվել է 557.2 մլն դրամով:

Այլ ուղղություններով կատարված ներդրումներ

Ներդրումային ծրագրի մնացած ուղղություններով նախատեսվում էր.

- համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների ձեռքբերում՝ 75 մլն դրամ արժեքով: Փաստացի ձեռք է բերվել 109.66 մլն դրամի համակարգչային տեխնիկա և աքսեսուարներ: Այս ուղղությամբ ներդրումները կատարվել են

146 %-ով: Բացի վերը նշվածը ձեռք է բերվել 96.58 մլն դրամի Մոդուս կարգավարական ծրագիր, որը համաձայնեցված չէ հանձնաժողովի հետ:

- գրասենյակային գույքի և կահույքի ձեռքբերման նպատակով փաստացի իրականացված ներդրումները կազմում են 162.98 մլն դրամ կամ նախատեսվածի 217.3%-ը,
- մեքենա-մեխանիզմների ձեռքբերման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 795.0 մլն դրամ: Այս ուղղությամբ 2010 թվականի ընթացքում ներդրվել է 826.9 մլն դրամ՝ նախատեսվածի 104%-ը,
- այլ սարքավորումների ձեռք բերման ուղղությամբ ներդրվել է 20.2 մլն դրամ՝ նախատեսվածի 101%-ը:

Սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Ինչպես արդեն նշվեց, 2010 թվականի ընթացքում ընկերության կողմից իրականացվել է 46 211.9 մլն դրամի ներդրումներ: Ավարտվել են 38 692.3 մլն դրամ ընդհանուր արժեքով աշխատանքներ, իսկ 7519.6 մլն դրամի աշխատանքներ մնացել են անավարտ: Ավարտված ներդրումների ծավալում 13026.7 մլն դրամը իրականացվել է «Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր» վարկային ծրագրի շրջանակներում, Ճապոնիայի Զարգացման և Համագործակցության բանկի վարկի միջոցներով:

Ներդրումային ծրագրի որոշ ենթաուղղություններ գերազանցել են հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 30-ի N324 որոշմամբ համաձայնեցված ծավալները, մասնավորապես.

Սպառողների էլեկտրաէներգիայի հոսանքազրկումների միջին տարեկան հաճախականության և տևողության կրճատում	2 113,7	մլն դրամով
Առևտրային հաշվառման համակարգի բարելավում	100,3	մլն դրամով
Անվտանգության ապահովում և մաշված սարքավորումների փոխարինում	557,2	մլն դրամով
Նոր սպառողների միացում	2552.4	մլն դրամով

«Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր» վարկային ծրագրի իրականացման նախապատրաստական աշխատանքներ	2759.6	մլն դրամով
Գրասենյակային գույքի ձեռքբերում	88,0	մլն դրամով
Մեքենաների և մեխանիզմների ձեռքբերում	98,3	մլն դրամով
Համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների ձեռքբերում	13,1	մլն դրամով

Հաշվի առնելով, որ սպառողների էլեկտրաէներգիայի հոսանքազրկումների միջին տարեկան հաճախականության և տևողության կրճատման ուղղությամբ իրականացված ներդրումները, համաձայն ներկայացված տեղեկատվության, որևէ ազդեցություն չեն ունեցել այդ ցուցանիշների բարելավման վրա, և անհասկանալի է, թե ինչով է պայմանավորված նախապես համաձայնեցված ծավալը ավելի քան 2 մլրդ. դրամով գերազանցումը, այս գումարը նվազեցվել է սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից: Չեն ընդունվել նաև գրասենյակային գույքի, առևտրային հաշվառման համակարգի բարելավման, անվտանգության ապահովման և մաշված սարքավորումների փոխարինման (չհիմնավորված) և համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների ձեռքբերման ուղղությամբ իրականացված համապատասխանաբար 88; 100.3, 195.1 և 13.1 մլն դրամի ներդրումները, քանի որ դրանք չեն կարող հանդիսանալ անհետաձգելի կամ անկանխատեսելի ներդրումներ:

Քանի որ նոր սպառողների միացման ուղղությամբ 2552.4 մլն դրամով գերազանցումը պայմանավորված է նոր սպառողների դիմումների քանակով և չէր կարող ճշգրիտ կանխատեսվել տարեսկզբին, այս գումարը ենթակա է ներառման սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հիմնավորումները հաշվի առնելով «Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր» վարկային ծրագրի իրականացման նախապատրաստական աշխատանքները 2759.6 մլն դրամ և մեքենաների և մեխանիզմների ձեռքբերման ծախսեր՝ 98.3 մլն դրամ չեն նվազեցվել սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների

ծավալից: Անվտանգության ապահովում և մաշված սարքավորումների փոխարինում ուղղությունից նվազեցվել է 195.1 մլն դրամ:

Իրականացված ներդրումների ծավալում առկա են աշխատանքներ, որոնք չեն ընդունվել հանձնաժողովի աշխատակազմի կողմից և ենթակա են նվազեցման ընկերության սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ մասնավորապես.

1. տարբեր լարման ցանցերում տեղակայված սարքավորումների (ԿՍՕ, ԿՌՈՒ, ՅԱՌՎ, ՎՌՈՒ, ՇՌՍ, ՇՉՕ) արժեքներից ռուսական շուկայում առկա առաջարկների հետ համադրության արդյունքում նվազեցվել է 644.5 մլն դրամ,
2. բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչների արժեքները նույնպես ուսումնասիրվել են ռուսաստանյան շուկայում առկա առաջարկների հետ, որի արդյունքում տեղակայված հաշվիչների ընդհանուր արժեքից նվազեցվել է 122.3 մլն դրամ:
3. 2010 թվականի ընթացքում ձեռք բերված 291.5 մլն դրամի հաշվիչների արկղերի արժեքից նվազեցվել է 70.6 մլն դրամ՝ հաշվի առնելով 2010թ. ներդրումային ծրագրում այդ արկղերի ձեռքբերման համար նախատեսված գները,
4. մինչև 25000 դրամ արժեքով աշխատանքները ընդհանուր 4.5 մլն դրամ ծավալով, քանի որ անհասկանալի է այդ աշխատանքների որպես ներդրում դիտարկելու հանգամանքը,
5. արտաքին լուսավորության աշխատանքները՝ 0.9 մլն դրամ ընդհանուր ծավալով, քանի որ դրանք չեն բխում ընկերության լիցենզավորված գործունեությունից,
6. նախագծման աշխատանքների ուղղությամբ իրականացված ներդրումներից նվազեցումներ.
   - հաշվետվությունում առկա են 238.1 մլն դրամի նախագծման ծախսեր, որոնց շրջանակներում իրականացված աշխատանքները արտացոլված չեն հաշվետվությունում: Այդ ծախսերը ենթակա են նվազեցման սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, քանի որ դեռևս չեն մասնակցում ընկերության լիցենզավորված գործունեությանը,

- ընկերության կողմից պատվիրված նախագծման աշխատանքների արժեքները կազմում են նախահաշվային արժեքների մոտ 13%-ը, ինչը զգալիորեն գերազանցում է այլ կարգավորվող անձանց կողմից իրականացվող նախագծման արժեքները (կազմում են նախահաշվային արժեքների շուրջ 7%-ը): Նշվածը հաշվի առնելով, աշխատակազմի կողմից ընդունվել է այդ ուղղությամբ իրականացված ներդրումների 7/13-րդը (186.1 մլն դրամ նվազեցվել է ներդրումների ծավալից),

7. ներդրումային ծրագրով չնախատեսված՝ 2379.9 մլն դրամի աշխատանքները, մասնավորապես՝ 422.4 մլն դրամ վարչական շենքերի վերակառուցման աշխատանքներ, 96.6 մլն դրամ՝ մոդուս ծրագրի ձեռքբերման ծախսեր և 1860.9 մլն դրամ, այլ չհամաձայնեցված ներդրումներ,
8. 2010 թվականի ընթացքում դուրս գրված հինական միջոցների արժեքը՝ 39.1 մլն դրամ:

Բացի վերը նշվածը, 2010 թվականին իրականացված ընկերության ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքների հիման վրա որոշ կապալառու կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքներից նվազեցվել են

1. նախահաշվային տոկոսները (այլ նյութեր, ձմեռային թանկացումներ և այլն), որոնք փաստացի կատարված աշխատանքներում չպետք է հաշվարկվեն,
2. քաղաքաշինական փաստաթղթերում և այլ կարգավորվող անձանց կողմից ներկայացվող աշխատանքներում ընդունվածից բարձր շահույթի և վերադիր ծախսերի նորմաները,
3. աշխատանքներ, որոնք բնույթով հանդիսանում են սակագնի ծախսային հոդվածներ,
4. կապալառու կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքներում առկա, շուկայականից բարձր գներով ձեռքբերված, սարքավորումների արժեքների տարբերությունները:

Այս ողղությամբ նվազեցումները կազմել են 873.6 մլն դրամ:

Ստորև ներկայացվում է փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալները (աղյուսակում ներառված չեն «Էլեկտրահաղորդման և բաշխիչ համակարգեր» վարկային ծրագրի միջոցներով իրականացված աշխատանքները՝ 13026,7 մլն դրամ ընդհանուր ծավալով):

Աղյուսակ 6

1	2010 թվականի ընթացքում իրականացված ներդրումներ	**29,147.5**
2	Ավարտված ներդրումներ	**25,665.6**
3	Իրականացված ներդրումներից նվազեցման ենթակա ներդրումներ	**7,833.4**
3.1	Հանձնաժողովի աշխատակազմի կողմից չընդունված ներդրումների ծավալը, այդ թվում՝	**7,069.7**
3.1.1	Սարքավորումների արժեքներից նվազեցումներ (կապված ընկերության կողմից դրանց ձեռք բերման և շուկայական գների տարբերության հետ), այդ թվում՝	**837.3**
ա.	Սարքավորումների (ԿՍՕ, ԿՌՈՒ, ՅԱՌՎ, ՎՌՈՒ, ՇՌՍ, ՇՉՕ) արժեքներից նվազեցումներ	**644.5**
բ.	Հաշվիչների արժեքից նվազեցումներ	**122.3**
գ.	Հաշվիչների արկղների արժեքից նվազեցումներ	**70.6**
3.1.2	Կապալառու ընկերությունների կողմից իրականացված աշխատանքների արժեքից նվազեցումներ նախահաշվային տոկոսների կիրառման պատճառով (նախնական գնահատական), այդ թվում	**873.6**
ա.	«Էլեկտրասերվիս» ՍՊԸ-ի իրականացված աշխատանքներից նվազեցումներ	254.8
բ.	«Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ի իրականացված աշխատանքներից նվազեցումներ	163.5
գ.	Այլ կապալառուների կողմից իրականացված աշխատանքներից նվազեցումներ	455.3
3.1.3	Նախագծման աշխատանքներից նվազեցումներ, այդ թվում՝	**424.2**
ա.	Նախագծման աշխատանքներից նվազեցումներ	186.1
բ.	Չավարտված աշխատանքների նախագծման աշխատանքների արժեքները	238.1
3.1.4	Համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող ներդրումներ	**2,510.2**
ա.	Սպառողների էլեկտրաէներգիայի հոսանքազրկումների միջին տարեկան հաճախականության և տևողության կրճատում	2,113.7
բ.	Գրասենյակային գույքի ձեռքբերում	88.0
գ.	Առևտրային հաշվառման համակարգի բարելավում	100.3

դ.	Անվտանգության ապահովում և մաշված սարքավորումների փոխարինում (չհիմնավորված)	195.1
ե.	Համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների ձեռքբերում	13.1
3.1.5	Այլ պատճառներով նվազեցումներ, այդ թվում	**2,424.4**
ա.	Ներդրումային ծրագրով չհամաձայնեցված Մոդուս ծրագրի ձեռքբերում	96.6
բ.	Ներդրումային ծրագրով չհամաձայնեցված վարչական շենքերի և շինությունների վերակառուցում	422.4
գ.	Ներդրումային ծրագրով չհամաձայնեցված այլ ներդրումներ	1,860.9
դ.	2010 թվականի ընթացքում դուրս գրված հիմնական միջոցներ	39.1
ե.	Մինչև 25 հազ դրամ արժողությամբ ներդրումներ	4.5
զ.	Արտաքին լուսավորության աշխատանքներ	0.9
3.2	Նոր բաժանորդների միացման ուղղությամբ կատարված միացման վճարներ	**763.6**
4	2010 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ծավալը	**17,832.2**